«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով
պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր
Պ.Ս. Ավետիսյան

_____ «07» ապրիլի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)
Զարգարյան Հայարփի Արթուրի

Հայարփի Արթուրի Զարգարյանի՝ «Երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էությունը և դրա կենսագործման հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայարփի Արթուրի Զարգարյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է իրավագիտության մեջ բավականին հետաքրքիր և

կարևոր նշանակություն ունեցող թեմայի՝ երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էությունը և դրա կենսագործման հիմնախնդիրներին:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն իրողությամբ, որ ժողովրդավարական երկրներում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովումն առանցքային կարևորություն ունի: Երեխան ազատ տեղաշարժվելու իրավունքի ինքնուրույն կրող է և կարող է իրացնել նշված իրավունքը, որն առանձին դեպքերում պետության կողմից կարող է ենթարկվել օրենքով սահմանված սահմանափակումների: Սակայն, անգամ այդ սահմանափակումները երեխայի հանդեպ կիրառելիս պետք է ղեկավարվել նրա լավագույն շահով: Ինչպես արդարացիորեն նշում է հեղինակը, երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքն ամրագրված չէ ներպետական օրենսդրությամբ, և այն՝ որպես երեխայի ինքնուրույն իրավունք, բացահայտված չէ նաև միջազգային իրավական հարթությունում: Այնինչ, իրավունքի զարգացման համատեքստում ազատ տեղաշարժվելու իրավունքն ունի իր ուրույն տեղը և կիրառման հարուստ պրակտիկան:

Ողջունելի է ատենախոսի կողմից նման թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը, քանի որ ՀՀ իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էության և դրա կենսագործման հիմնախնդիրների մանրամասն հետազոտություն և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել ձևակերպել երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի և երեխայի բնակության վայրի իրավունքի սահմանումը, ինչպես նաև օրենսդրական մակարդակում ամրագրման ենթակա նորմերը: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը կարողացել է հասնել իր առջև դրված վերոհիշյալ նպատակներին:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է երեք գլխից, որոնցում հեղինակը մանրամասնորեն վերլուծում է վերոնշված և այլ հարցերը՝ առաջարկելով հնարավորինս համապարփակ լուծումներ, այդ թվում օրենսդրության փոփոխության առաջարկներ և իրավակիրառական պրակտիկայում առաջացած հարցերի լուծման եղանակներ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում տեղ գտած եզրահանգումները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ պատկերացումների ընդլայնմանը և հանդիսանալ տեսական աղբյուր հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար: Բացի այդ, հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված օրենսդրական առաջարկությունները կարող են կիրառվել երեխայի իրավունքների վերաբերյալ օրենսդրության բարեփոխումների ժամանակ, նպաստել իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների ընթացքում:

Ատենախոսության ակնառու արժանիքներն են.

- Ատենախոսն իր աշխատանքում հետազոտել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններ: Մասնավորապես, հեղինակը լիարժեքորեն ուսումնասիրության է ենթարկել վերաբերելի տեսական, օրենսդրական, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերը: Ընդ որում, ատենախոսը գնահատականի է արժանացրել մի շարք իրավական դրույթներ, որոնք պետք է ենթարկվեն ժամանակակից ըմբռնման և հստակեցման:

- Աշխատանքում արծարծվել են նյութական իրավունքի նորմերի բացերը (ներկայացված իրավունքների լիարժեք կիրարկումն ու դրանց միջոցով երեխայի լավագույն շահերի ապահովումը հնարավոր է նյութական հնարավորինս անթերի նորմերի գոյության պայմաններում),

- Առաջարկվել են օրենսդրական փոփոխություններ՝ հիմք ընդունելով նաև երեխայի իրավունքների կիրառման ներպետական և դատական պրակտիկան:

Ուշագրավ են հեղինակի կողմից արված մի շարք դիտողություններ և առաջարկություններ, որոնք վերաբերում են երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի կատարելագործմանը:

Պետք է նշել դրանցից մի քանիսը.

- Այսպես, տեղին է հեղինակի կողմից կատարված այն դիտողությունը, որ .«Երեխայի բնակելի տարածության իրավունք» վերտառությամբ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածն ամբողջությամբ չի ներառում երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքը, և բովանդակային իմաստով չի արտացոլում երեխայի բնակության վայրի իրավունքը, քանի որ օրենսդիրն օգտագործել է «ապրելու իրավունք» արտահայտությունը, որը վերաբերում է կյանքի իրավունքին, ինչն իր հերթին չի նույնանում բնակվելու իրավունքի հետ: Հետևաբար, պետք է տարանջատել իրավունքի ինքնուրույն տեսակները և խնդրո առարկա հոդվածում ամրագրել այն բառը, որն արտահայտում է օրենսդրի իրական կամքը:

- Ատենախոսը տեղին է նկատում, որ ընտանեկան իրավահարաբերություններում համընդհանուր ճանաչում ստացած «երեխայի շահ» հասկացությունն ամրագրվել է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքում, և հեղինակի կողմից դրվել է երեխայի ազատ տեղաշարժվելու և երեխայի բնակության վայրի իրավունքների մեկնաբանության և վերլուծությունների հիմքում:

- Ուշադրության արժանի են հեղինակի կողմից ներկայացրած որոշ եզրահանգումներ, մասնավորապես այն, որ երեխայի լավագույն շահի ապահովման արդյունավետ միջոցը երեխայի կարծիքը լսելն է, իսկ որոշ դեպքերում՝ համաձայնությունը հաշվի առնելը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը մեկնաբանելով երեխայի ազատ տեղաշարժվելու և բնակության վայրի իրավունքների համատեքստում և դիտարկելով երեխայի լսված լինելու իրավունքը ոչ միայն որպես ինքնուրույն իրավունք, այլև որպես գործիք՝ այլ իրավունքների իրացման և երեխայի լավագույն շահը պարզելու համար՝ երեխայի ազատ տեղաշարժվելու և բնակության վայրի իրավունքները հեղինակի կողմից դասվել են հատուկ իրավունքների շարքին, որոնց իրացման հարցում անհրաժեշտ է երեխայի համաձայնությունը:

Չթերագնահատելով կատարված հետազոտության գիտական արժեքը, այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ կարելի է որոշ դիտողություններ անել: Մասնավորապես.

- Աշխատանքում հստակ ձևակերպված չեն պաշտպանության ներկայացվող տեսական դրույթները, ինչպես նաև դրանք տարանջատված չեն պաշտպանության ներկայացվող գործնական դրույթներից: Չէ՞ որ հետազոտության գիտական նորույթը, ինչպես նաև տեսական նշանակությունը պայմանավորված է հենց պաշտպանության ներկայացվող տեսական դրույթների առկայությամբ և դրանց հիմնավորվածությամբ:

- Հեղինակն առաջարկում է փոփոխություններ կատարել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում «Երեխայի հիմնական իրավունքները և դրանց երաշխիքները» վերնագրված Գլուխ II-ում, և այն լրացնել առանձին հոդվածով՝ «Երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքը» վերտառությամբ: Գտնում ենք, որ հեղինակը թերի է հիմնավորել նման օրենսդրական նորմի ամրագրման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածում արդեն իսկ սահմանված է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը:

- Ատենախոսության մեջ բավարար չափով ուսումնասիրված չէ արտասահմանյան երկրների պրակտիկ փորձը, ատենախոսը հիմնականում ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան:

- Կարծում ենք, որ աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն ուսումնասիրեր ոչ միայն երեխայի լավագույն շահերի և լսված լինելու իրավունքների, այլ նաև՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները:

Այնուամենայնիվ, նշված առաջարկություններն ու դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Հայարփի Արթուրի Զարգարյանի՝ «Երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էությունը և դրա կենսագործման հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ ատենախոսը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն և

ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված և գործնական նշանակություն ունեցող աշխատանք:

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ **ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ**

Նիստի քարտուղար՝ **Տ. Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ **Ա. Ս. ԿԱՍԱՊԱԲՈՎԱ**